ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3594-Ա « 02 » սեպտեմբերի 2025թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 15-Ի N 117-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի» մասին օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով.

1. Երևանի քաղաքապետի՝ 2025 թվականի հունվարի 15-ի «Հեղուկ վառելանյութի բաշխման մասին» N 117-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել որոշման հավելվածում նշված ստորաբաժանումների պետերի վրա:

3. Որոշման կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետը:

4. Սույն որոշման գործողությունը տարածվում է 2025 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված
Երևանի քաղաքապետի
«02» 09 2025թ.
N 3594 - Ա որոշման

«Հավելված
Երևանի քաղաքապետի
15.01.2025թ.
N 117- Ա որոշման

ԲԱՇԽՈՒՄ

Երևանի քաղաքապետարանի աշխատակիցների անձնական օգտագործման ավտոմեքենաները ծառայողական նպատակով օգտագործելու դիմաց, որպես օգնություն (անհատույց) հատկացվող հեղուկ վառելանյութի (բենզին)

h/h	Ստորաբաժանման անվանումը	Ամսական հատկացվող վառելիքի (բենզին) քանակը /լիտր/
1	2	3
1	Հասարակական կարգի պահպանության ծառայություն	4700
2	Կոմունալ տնտեսության վարչություն	1430
3	Քաղաքաշինության և հողի վերահսկողության վարչություն	1250
4	Վերահսկողության վարչություն	950
5	Առևտրի, ծառայությունների և գովազդի վարչություն	600
6	Շինարարության և բարեկարգման վարչություն	1200
7	Ներքին աուդիտի բաժին	400
8	Ֆինանսական վարչություն	380
9	Իրավաբանական վարչություն	1000
10	Մատակարարման և տեխնիկական սպասարկման ծառայություն	400
11	Արտաքին կապերի վարչություն	90
12	Զորահավաքային հարցերի և քաղաքացիական պաշտպանության վարչություն	400
13	Սպորտի և երիտասարդության հարցերի վարչություն	200
14	Քարտուղարություն	200
15	Տրանսպորտի վարչություն	525
16	Երևանի քաղաքապետի օգնական	400
	ԸՆԴԱՄԵՆԸ	**14125**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**